

ՄԱՆԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԿԱՐԻԵՍԻ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԱՏԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆՔՆՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Տվյալ ուղեցույցը նախատեսված է օգնելու բժիշկներին երեխաների և դեռահասների մոտ ատամների վերականգնողական բուժման վերաբերյալ որոշումներ կայացնելիս, այդ թվում բուժման անհրաժեշտության և համապատասխան նյութերի և տեխնոլոգիաների ընտրության հարցում:

Մեթոդաբանություն

Այս ուղեցույցը մշակվել է Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի աշխատակիցների կողմից: Փաստաթղթի սկզբնաղբյուր է հանդիսացել Ամերիկյան մանկական ստոմատոլոգիայի ակադեմիայի (American Academy of Pediatric Dentistry, AAPD) 2016թ. լույս տեսած “Guideline on Restorative Dentistry” կլինիկական ուղեցույցը: Այս փաստաթղթի խորհուրդները հիմնված են գրականության համակարգային վերլուծությունների և փորձագետների կարծիքների վրա: Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Երևանի Մ. Հերացու անվ. Պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի ընդլայնված նիստի ընթացքում (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է մանկական և մեծահասակների ստոմատոլոգների, մանկաբույժների և առողջապահության կազմակերպիչների համար:

Արդյուքներ

Սույն ուղեցույցի խորհուրդները էականորեն օգնում են գործնական ստոմատոլոգին կլինիկական որոշումներ կայացնելիս կարիեսի բուժման և ատամների վերականգնման վերաբերյալ: Մասնավորապես ներկայացվել են ապացուցողական հիմքեր ունեցող մի շարք տվյալներ վերականգնումների ժամանակ կիրառվող համապատասխան նյութերի և տեխնոլոգիաների վերաբերյալ:

Հետևություններ

Ապացուցողական մոտեցումների վրա հիմնված կարիեսի բուժման և ատամների վերականգնման համապատասխան տարբերակի ճիշտ ընտրությունը կնպաստի բուժման ելքերի բարելավմանը:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, կաթնատամների վերականգնում, խորանիստ կարիեսի բուժում և վերականգնում, սիլանտներ, խեժային ինֆիլտրացիա, ամալգամ, բիսֆենոլ-A, ԱԻՑ, ԽՄԱԻՑ, ԱՌՏ, կոմպոներներ

Պատասխանատու համակարգող

Տեր-Պողոսյան Հ. Յու., բ.գ.դ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի վարիչ, Համալսարանական թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկայի ղեկավար

Աշխատանքային խմբի անդամներ

- Վարդանյան Ի.Ֆ., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դոցենտ

- Բաղեյան Է. Հ., ք.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դոցենտ
- Բաղայան Ա.Ժ., «Հովարդ Կարագյոզյան» Բ.Բ.Հ.Կ.տնօրենի տեղակալ բուժ. գծով
- Գևորգյան Մ.Ա., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դասախոս
- Բալասյան Ս.Գ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարում են շահերի բախման բացակայության վերաբերյալ: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կազմակերպությունը չի ունեցել որևէ ազդեցություն փաստաթղթի պարունակության կամ ձևավորման վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողն իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական

կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար, Բ.գ.թ. Հարություն Մանգոյանին, ինչպես նաև Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի դասախոս Ռուզաննա Ստեփանյանին և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր Նարինե Միրզոյանին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում

Բովանդակություն

Նախաբան

Ռեստավրացիոն բուժման նպատակները, առավելությունները և թերությունները

Խորանիստ կարիեսի դեպքում վերականգնողական բուժման ընտրությունը

Ատամների փոսիկների և ակոսների պատում սիլանտներով

Խեժային ինֆիլտրացիա

Ամալգամա

Կոմպոզիտներ

Ապակեիոնոմերային ցեմենտներ

Կոմպոմերներ

Ստանդարտ մետաղական պսակներ

Hall Technique

Ֆրոնտալ կաթնատամների գեղագիտական վերականգնում

Հավելված 1

Հավելված 2

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հապավումներ

AAPD (American Academy of Pediatric Dentistry)՝ Ամերիկյան մանկական ստոմատոլոգիայի ակադեմիա

BPA (Bisphenol A)՝ Բիսֆենոլ A

BSPD (British Society of Paediatric Dentistry)՝ Մանկական ստոմատոլոգիայի բրիտանական կազմակերպություն

FDA (Food and Drug Administration)՝ ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչություն

HT (Hall Technique)՝ պողպատե պսակների կիրառում առանց ատամների հղկման

ԱԻՑ՝ Ապակեփոնոմերային ցեմենտ

ԱՀԿ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԱՌՏ՝ Ատրավմատիկ ռեստավրացիոն տեխնիկա

ԽՄԱԻՑ՝ Խեժերով մոդիֆիկացված ապակեփոնոմերային ցեմենտ

ՄԹՌ՝ Միջանկյալ թերապևտիկ ռեստավրացիա

ՍՀՄԱ՝ Ստոմատոլոգիական հետազոտությունների միջազգային ասոցիացիայի

Նախաբան

Պատմականորեն ատամների կարիեսի վերահսկումը հիմնված է եղել այն համոզմունքի վրա, որ կարիեսը հարաճող հիվանդություն է և, ի վերջո, վիրահատական և վերականգնողական բուժման բացակայության դեպքում բերում է ատամների քայքայման: [2] Ներկայումս ընդունված է, որ ատամների կարիեսի վերականգնողական բուժումը միայնակ ունակ չէ կանգնեցնելու կարիոզ պրոցեսը, [3] իսկ ռեստավրացիաներն ունեն ծառայության սահմանափակ ժամկետներ:

Ընդհակառակը, որոշ դեպքերում կարիոզ պրոցեսը կարող է չհարաճել և, հետևաբար, չպահանջել վերականգնում: Կարիեսի վերահսկման ժամանակակից մոտեցումը ներառում է կարիեսի հարաճման անհատական վտանգի որոշում, տվյալ անհատի մոտ պրոցեսի առանձնահատկությունների որոշում, հիվանդության հարաճման ակտիվ հսկողություն և պրոցեսի վերահսկում անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների օգնությամբ, ցուցումների դեպքում լրացնելով դրանք ռեստավրացիոն թերապիայով: [4]

Բավականին քիչ է կաթնատամների կարիեսի ախտորոշման վերաբերյալ ինֆորմացիան, [2] քանի որ կաթնատամների դեպքում անհրաժեշտ են այլ չափանիշներ՝ կապված էմալի և դենտինի նվազագույն հաստության և լայն պրոքսիմալ կոնտակտների հետ: [6] Բացի այդ, կաթնատամների վերականգնման ցուցումները դիտարկվել են հիմնականում միայն մակերեսորեն, քանի որ որոշումների մեծ մասը կայացվում են՝ կախված տվյալ կլինիկական դեպքից: [7]

Ռեստավրացիայի իրականացման վերաբերյալ որոշումը պետք է հիմնված լինի առնվազն էմալի վրա կարիոզ խոռոչի վիզուալ հայտնաբերման, էմալի գունափոխման և/կամ ժամանակի ընթացքում կարիոզ ախտահարման մեծացման ռադիոգրաֆիկ վերահսկման վրա: [4, 8, 9]

Ռեստավրացիոն բուժման նպատակները, առավելությունները և թերությունները

Ռեստավրացիոն բուժման խնդիրներից են

- ատամի հյուսվածքների վերականգնումը,
- կարիեսով ախտահարման սահմանափակումը,
- ատամի կառուցվածքի հետագա պաշտպանումը և պահպանումը,
- կակղանի կենսունակության պահպանումը: [14]

Ռեստավրացիոն թերապիայի առավելություններն են՝

- կարիեսով ախտահարված և կարիեսի հանդեպ ընկալունակ հյուսվածքների հեռացումը,
- ատամի ապակրակալման հարաճման խաթարումը,
- ատամի կառուցվածքի վերականգնումը,
- կակղանի ինֆեկցման կանխարգելումը,
- հյուսվածքների մեծ կորստի պատճառով գամիկով ատամի վերականգնման կանխարգելումը:

Ռեստավրացիոն թերապիայի վտանգներն են՝

- ատամի կյանքի տևողության կրճատումը՝ ատամն ավելի հակված է դառնում կոտրվելու, կրկնակի ախտահարման, ռեստավրացիայի վնասման կամ արտանկման;
- կարիեսի արտաքերման ժամանակ կակղանի վրա ազդեցությունը;
- կակղանի հետ կապված հետագա բարդությունները;
- հարևան ատամների յաթրոգեն վնասումը: [10, 11, 12]

Կաթնատամներում ռեստավրացիաների վնասումը կամ արտանկումն ավելի հաճախ են հանդիպում, քան մշտական ատամներում: [13] Բացի այդ, նախքան կաթնատամների վերականգնումը պետք է հաշվի առնել մինչև մշտական ատամի ծկթումը մնացած ժամանակը:

Խորանիստ կարիեսի դեպքում վերականգնողական բուժման ընտրությունը

Խորանիստ կարիեսի բուժման նպատակով վերականգնումից առաջ ախտահարված հյուսվածքների ամբողջական հեռացումը համեմատել են կարիոզ հյուսվածքների ոչ ամբողջական հեռացման հետ:

18 Երկու քայլերից բաղկացած փուլային մաքրում՝ առաջին այցի ընթացքում կարիոզ դենտինը մասնակի հեռացվում է, պահպանվում է կարիեսով ախտահարված դենտինի որոշակի շերտ կակղանի վրա, ատամը ժամանակավոր պլոմբավորվում է:

Երկրորդ այցելության ժամանակ ամբողջ կարիոզ փոփոխված դենտինը հեռացվում է և ատամը ենթարկվում է վերջնական պլոմբավորման: [15]

2. Մասնակի կամ մեկ փուլով մաքրում ենթադրում է կարիոզ փոփոխված դենտինի մասնակի հեռացում, կակղանի վրա պահպանվում է որոշակի հաստությամբ կարիոզ դենտինի շերտ, ատամը վերջնական պլոմբավորվում է: [16, 17]

Պատահական բաշխմամամբ վերահսկվող փորձարկումները և համակարգված վերլուծությունները ցույց են տալիս, որ կաթնատամներում և մշտական ատամներում կարիեսով ախտահարված հյուսվածքների մասնակի հեռացման դեպքում կակղանի վնասումը էականորեն նվազել է՝ համեմատած նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով ախտահարված ատամներում կարիեսի ամբողջական հեռացման հետ: Երկու կլինիկական փորձարկումներ ցույց են տվել, որ կարիեսի մասնակի հեռացումը բերում է կակղանի զգալի քիչ վնասման՝ համեմատած ամբողջական հեռացման հետ: [19-21] Երկփուլ մշակումն ուսումնասիրող երկու փորձարկումներ ցույց են տվել, որ կակղանի վրա ազդեցությունը հանդիպում է ավելի հաճախ ամբողջական հեռացման դեպքում՝ ի տարբերություն երկփուլ մաքրման: [15, 20] Առկա են ապացույցներ, որ կարիոզ հյուսվածքների ամբողջական և մասնակի հեռացումից հետո կակղանի կողմից բարդությունների և հետմանիպուլյացիոն ցավի առաջացման նվազումը համանման է՝ կլինիկական փորձարկումներում [15, 20, 22, 23] և մետա-անալիզների գումարային արդյունքներում: [24]

Բացի այդ, մետա-անալիզները բացահայտել են, որ մշտական ռեստավրացիայի վնասման կամ արտանկման վտանգը համանման է մասնակի կամ ամբողջական մշակման ենթարկված ատամների համար: [24] Եվս մեկ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկում, որը համեմատել է մշտական աղորիքներում մեկ փուլով մասնակի մշակումը երկփուլ մշակման հետ, ցույց է տվել, որ կակղանի կենսունակության պահպանման տեսանկյունից առավել բարեհաջող է մասնակի մշակումը, ընդ որում առանց խոռոչի վերաբացման և վերամշակման

անհրաժեշտության: [16] Երկու այլ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումների արդյունքում պարզվել է, որ կարիեսի ոչ ամբողջական արտաքերումը կարող է կարիեսը կանգնեցնել այնքան ժամանակ, որքան ունակ է որակյալ լեցավորումը վերջնական ռեստավրացիայի դեպքում: [18, 25]

Խորհուրդներ

- 1. Նորմալ կակղանով կամ դարձելի պուլպիտով ախտահարված կաթնատամներում և մշտական ատամները կարելի է վերականգնել ախտահարված հյուսվածքների մասնակ կամ միափուլ/երկփուլ արտաքերումից հետո:**
- 2. Մշտական ատամներում կարիեսով ախտահարված հյուսվածքների մասնակի (միափուլ) արտաքերումը վերջնական պլոմբավորումով կարելի է կիրառել որպես կարիեսի բուժման հնարավոր տարբերակ, որը ցուցաբերում է ավելի բարեհաջող արդյունքներ կակղանի կենսունակության պահպանման տեսանկյունից, քան երկփուլ արտաքերումը:**

Ատամների փոսիկների և ակոսների պատում սիլանտներով

Փոսիկների և ակոսների կարիեսը կազմում է մշտական ծամիչ ատամների կարիեսի մոտավորապես 80-90%, իսկ կաթնատամներում՝ 44%:[9] Փոսիկների և ակոսների սիլանտները նկարագրված են որպես կարիեսի հանդեպ ընկալունակ ատամների փոսիկներում և ակոսներում տեղադրվող նյութեր, որոնք միկրոմեխանիկական կապերով ամրանում են ատամին և կանխարգելում կարիեսագեն մանրէների մուտքը դեպի սնուցման ներքին աղբյուրներ, [27] դրանով իսկ նվազեցնելով կարիեսի առաջացման վտանգը տվյալ հատվածներում:

Ապացուցված է, որ երեխաների և դեռահասների մշտական աղորիքների ծամողական մակերեսներին տեղադրված սիլանտները զգալի կրճատում են

կարիեսը՝ համեմատած սիլանտների բացակայության հետ: [28] Բազմաթիվ ուսումնասիրությունների մետա-անալիզների համաձայն՝ ինքնապոլիմերիզացվող սիլանտների ընդհանուր արդյունավետությունը կարիեսի կանխարգելման տեսանկյունից կազմել է 71%: [29] Այլ դիտարկումների տվյալներով՝ խեժային հիմքով սիլանտները երեխաների և դեռահասների մոտ կարիեսը կրճատում են 86%-ով մեկ տարի և 57%-ով 48-54 շաբաթ հետո: [30] Արդյունավետության ապահովման նպատակով ատամի մակերեսին ամրացումից հետո սիլանտը պետք է գտնվի հսկողության տակ: Հետազոտությունները ցույց են տալիս սիլանտների բարեհաջող պահպանում ատամի մակերեսին 80-90% դեպքերում 10 և ավելի տարի անց: [31, 32] Գոյություն ունեն բազմաթիվ սիստեմատիկ վերլուծություններ և կլինիկական փորձարկումներ սիլանտների արդյունավետության օպտիմիզացման վերաբերյալ: Սիլանտներն ավելի մատչելի են ֆինանսական առումով կարիեսի առաջացման ռիսկ ունեցող երեխաների մոտ և, որպես կանոն, ցուցված են կիրառման կարիեսի առաջացման ռիսկի խմբի երեխաների մոտ: [4, 9, 26] Կարիեսի բարձր ռիսկի լավագույն գնահատումը կատարվում է փորձառու բժշկի կողմից՝ հաշվի առնելով ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ածխաջրերի օգտագործման բարձր հաճախականությունը, կարիեսի առկայությունը անամնեզում, սպիտակ բծի կամ էմալում դեֆեկտի ձևով ակտիվ ախտահարումները և դանդաղ թքարտադրությունը: [4]

Փոսիկների և ակոսների սիլանտները նվազեցնում են կենսունակ մանրէների քանակը, այդ թվում *Streptococcus mutans*-ի և լակտոբացիլների, առնվազն 100 անգամ, և նվազեցնում են որոշ կենսունակ մանրէների կողմից վնասումը մոտավորապես 50%-ով: [33] Նշված վկայություններն ապացուցում են այն, որ սիլանտները պետք է կիրառել զոնդավորվող մակերեսների և առանց խոռոչի ձևավորման էմալի ախտահարումների փակման համար: [9, 33]

Ապացույցների վրա հիմնված վերլուծությունները և կլինիկական փորձարկումներն օգնում են գնահատել սիլանտների տեղադրման տեխնիկաները: Համաձայն

պարբերական վերլուծությունների տվյալների, ատամի մեկուսացումը սիլանտների տեղադրման ժամանակ կարևորագույն ասպեկտներից է, և rubber dam-ի կիրառումը դրական է ազդում խեժային հենքով լուսակարծրացող սիլանտների ռետենցիայի ցուցանիշների վրա: [34] Խոնավության վերհսկման համակարգերն ապահովում են սիլանտների այնպիսի ռետենցիա, ինչպիսին ապահովում են բամբակե գլանիկներով մեկուսացումը կամ rubber dam-ը, նվազեցնելով միջամտության տևողությունը: [35, 36] Այլ պարբերական վերլուծություններ ցույց են տալիս, որ "չորս ձեռքերով աշխատանքի" տեխնիկան ապահովում է խեժային հենքով սիլանտների բարձր ռետենցիա: [37] Երկու սիստեմատիկ վերլուծություններ պարզել են, որ ատամների մասնագիտական հիգիենիկ մաքրումից հետո կատարված սիլանտի ապիկացիան ցուցաբերում է համանման կամ ավելի բարեհաջող արդյունք, քան անհատական հիգիենիկ մաքրումից հետո կատարված ապիկացիան: [37, 38] Բացի այդ, գոյություն ունեն սահմանափակ և հակասական տեղեկություններ՝ կապված նախքան սիլանտի տեղադրումը ատամի մակերեսի զջիրով մեխանիկական մշակման անհրաժեշտության հետ: [9] Առկա են ապացույցներ, որ մեխանիկական մշակումը կարող է ատամը դարձնել ավելի ընկալունակ կարիեսի հանդեպ՝ սիլանտի արտանկման դեպքում: [39]

Սիլանտի ապիկացիայից առաջ փրայմերի կիրառման վերաբերյալ կատարվել է մեկ ռանդոմիզացված կլինիկական փորձարկում, որը ցույց է տվել, որ ացետոնային կամ էթանոլային լուծիչներով փրայմերները, հատկապես մեկ սրվակով համակարգերը, մեծացնում են սիլանտների ռետենցիան, մինչդեռ ջրային փրայմերները կտրուկ նվազեցնում են ռետենցիան: [40] Սիստեմատիկ վերլուծությունները պարզել են, որ ինքնաթթվամշակվող բոնդինգային համակարգերը, որոնցում գոյություն չունի թթվամշակման առանձին փուլ, չեն կարող ապահովել այնքան լավ ռետենցիա, որքան առանձին թթվամշակման տեխնիկայի կիրառման դեպքում; [34] այնուամենայնիվ, վերջերս կատարված մեկ ռանդոմիզացված կլինիկական

հետազոտություն ցույց է տվել, որ երկու դեպքում էլ հնարավոր է ստանալ ռետենցիայի համանման մակարդակ: [41]

Գոյություն ունեն սիստեմատիկ վերլուծությունների և կլինիկական փորձարկումների վրա հիմնված ծավալուն տվյալներ խեժային և ապակեփոնոմերային սիլանտների կիրառման վերաբերյալ: Դրանք ցույց են տալիս, որ խեժային սիլանտների ռետենցիան համեմատելի է ապակեփոնոմերային սիլանտների ռետենցիայի հետ: [28, 42] Այնուամենայնիվ, ապակեփոնոմերային սիլանտները ցուցաբերում են կարճատև որակյալ ռետենցիա, որը համեմատելի է խեժային սիլանտների մեկ տարվա ազդեցության հետ, և դրանք կարելի է կիրառել որպես ժամանակավոր կանխարգելիչ միջոց այն դեպքերում, երբ խեժային սիլանտի տեղադրումը կասկածի տակ է խոնավության վերահսկման անհնարինության պատճառով: [9, 28] Խեժային և ապակեփոնոմերային սիլանտների կարիեսը կանխարգելող հատկությունների ուսումնասիրման այլ սիստեմատիկ վերլուծություններ չեն հայտնաբերել տարբերություններ նշված երկու նյութերի միջև: [43]

Կաթնատամներում ակոսների մեկուսացման համար սիլանտների կիրառման վերաբերյալ տվյալներն անբավարար են: Մեկ հետազոտություն արձանագրել է լուսակարծրացող սիլանտի կայուն ռետենցիա 2,8 տարվա ընթացքում 76,5% դեպքերում: [44] Այլ ռանդոմիզացված կլինիկական հետազոտություն ուսումնասիրել է կաթնատամ աղորիքներում ապակեփոնոմերային սիլանտների կիրառման արդյունավետությունը և պարզել է, որ 1,38 տարվա ընթացքում ռետենցիան կայուն է եղել 18,7% դեպքերում և կարիեսի զգալի ռեդուկցիա չի նկատվել: [45]

Խորհուրդներ

- 1. Սիլանտները խորհուրդ է տրվում կիրառել փոսիկների և ակոսների մակերեսներին կարիեսի զարգացման ռիսկի կամ արդեն առաջացող ախտահարման, առանց խոռոչի դեֆեկտի առկայության դեպքում, որպեսզի կասեցվի կարիոզ ախտահարման խորացումը:**

2. Սիլանտի տեղադրումից առաջ խորհուրդ է տրվում կատարել փոսիկների և ակոսների զգույշ մաքրում՝ առանց մեխանիկական մշակման:
3. Խեժային սիլանտները խորհուրդ է տրվում տեղադրել խոնավությունից մեկուսացված միջավայրում, որը հաճախ հնարավոր է ապահովել "չորս ձեռքերով աշխատանքի" տեխնիկայով:
4. Խորհուրդ է տրվում սիլանտի տակ կամ որպես սիլանտի բաղկացուցիչ մաս կիրառել ցածր մածուցիկությամբ հիդրոֆիլ նյութից բաղկացած բոնդինգային շերտը, որն ապահովում է երկարատև ռետենցիա և արդյունավետություն:
5. Խորհուրդ է տրվում կիրառել խեժային սիլանտներ, որոնք ապահովում են ավելի լավ ռետենցիա, սակայն այն դեպքում, երբ խոնավության վերահսկումն անհնար է, կարելի է կիրառել ապակեփոնոմերային սիլանտները:

Խեժային ինֆիլտրացիա

Խեժային ինֆիլտրացիան ինտերպրոքսիմալ տեղակայման, առանց խոռոչի կարիոզ ախտահարումների զարգացման առաջնային կանխարգելման ինովացիոն մոտեցում է: [46,47] Խեժային ինֆիլտրացիայի տեխնիկայի նպատակն է թույլ տալ ցածր մածուցիկությամբ խեժերին ներթափանցել էմալի կարիոզ ախտահարման սպունգանման շերտ: [46]

Մեծաքանակ ռանդոմիզացված կլինիկական փորձարկումներն ունեցել են արտադրողների աջակցում և շահերի բախման պոտենցիալ վտանգ: Նման փորձարկումներից մեկի միջոցով գնահատել են ինֆիլտրացիան և սիլանտներն՝ ընդդեմ պլացեբոյի, և հայտնաբերել նշանակալի տարբերություններ ինֆիլտրացիայի և պլացեբոյի միջև՝ ախտահարման հարաճում 32% և 70% համապատասխանաբար: [48] Այլ ռանդոմիզացված կլինիկական փորձարկման արդյունքում ևս գրանցվել են տարբերություններ ինֆիլտրացիայի (7% կարիոզ

ախտահարման հարաճում) և պլացեբոյի (37% կարիոզ ախտահարման հարաճում) միջև: [46] Վերլուծությունները բերել են այնպիսի եզրահանգման, որ խեժային ինֆիլտրացիան ունակ է դանդաղեցնել առանց խոռոչի կարիոզ դեֆեկտի հարաճումը կամ նպաստել պրոցեսի հետզարգացմանը: [49]

Բացի այդ խեժային ինֆիլտրացիան կարող է կիրառվել օրթոդոնտիկ բուժման ընթացքում առաջացած կավճանման սպիտակ դեֆեկտների ռեստավրացիայի ժամանակ: Ըստ ռանդոմիզացված կլինիկական փորձարկումների՝ խեժային ինֆիլտրացիան զգալի փոխում է սպիտակ բծերի կլինիկական տեսքը և տեսանելի փոքրացնում դրանց չափերը: [50]

Խորհուրդներ

- 1. Խեժային ինֆիլտրացիան կարելի է կիրառել փոքր, առանց խոռոչի, ինտերպրոքսիմալ կարիոզ ախտահարումների դեպքում մշտական ատամներում:**

Ամալգամա

Դենտալ ամալգաման ծամիչ ատամների վերականգնման համար ամենահաճախ կիրառվող ռեստավրացիոն նյութն է եղել 150 տարուց ավելի և այսօր էլ այն լայնորեն կիրառվում է ամբողջ աշխարհում: [51] Ամալգաման բաղկացած է մետաղների խառնուրդից, որը պարունակում է արծաթ, պղինձ, անագ և մոտ 50% սնդիկ: [52] Դենտալ ամալգամայի կիրառումը կրճատվել է վերջին տասնամյակում, [51] հնարավոր է, որ առողջության վրա սնդիկի գոլորշիների ազդեցության, սնդիկի պարունակության պատճառով շրջակա միջավայրում էկոլոգիական խնդիրների շուրջ վեճերի, ինչպես նաև էսթետիկ այլընտրանքային տարբերակների հանդեպ պահանջարկի մեծացման պատճառով:

Կապված ամալգամայի անվտանգության հետ՝ 2004-2008թթ. տպագրված ստոմատոլոգիական հետազոտությունների համալիր ուսումնասիրությունը չի

հայտնաբերել ամալգամայից սնդիկի արտազատման և տարբեր հիվանդությունների առաջացման միջև կապը հաստատող բավարար ապացույցներ: [53] Երկու անկախ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումների միջոցով ուսումնասիրել են երեխաների մոտ ամալգամայից արտազատվող սնդիկի ազդեցությունը և չի հայտնաբերվել որևէ ազդեցություն կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի և երիկամների գործունեության վրա: [54, 55] Այնուամենայնիվ, 2009 թ. հուլիսի 28-ին ԱՄՆ FDA թողարկել է վերջնական որոշում, որը հանում է ամալգաման II դասի կարիոզ ախտահարումների վերականգնման սխեմայից (որոշակի վտանգի առկայություն) և առաջարկում է ձեռնարկ նախազգուշացնող գրառումներով՝ սնդիկի գոլորշիների հնարավոր վտանգի, սնդիկի արտազատման, սնդիկի հանդեպ զգայունություն ունեցող անձանց համար հակացուցումների վերաբերյալ: Այս որոշման մեջ ԱՄՆ FDA նշում է նաև, որ հղի կանանց, զարգացող պտղի, մինչև 6 տարեկան երեխաների առողջության վրա ամալգամայի երկարատև ազդեցության վերաբերյալ ինֆորմացիան սահմանափակ է: [52]

Այլ ռեստավրացիոն նյութերի երկարակեցության հետ ամալգամե ռեստավրացիաների երկարակեցության համեմատության արդյունքները հակասական են: Մետա-անալիզների, փաստացի տվյալների վրա հիմնված վերլուծությունների և ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումների մեծ մասը վկայում են, որ ամալգամե ռեստավրացիաների երկարակեցությունը համեմատելի է այլ ռեստավրացիոն նյութերի տվյալ ցուցանիշի հետ, [56-61] մինչդեռ այլ տվյալների համաձայն՝ ամալգաման ավելի երկար է պահպանվում: [62, 63] Համեմատելիությունն առավել ստույգ է, երբ ռեստավրացիաները կատարվում են վերահսկվող միջավայրում, օրինակ՝ համալսարանական միջավայրում: [56]

Կաթնատամներում I դասի կարիոզ խոռոչների ամալգամե ռեստավրացիաները, ինչպես ցույց են տալիս սիստեմատիկ վերլուծությունները և երկու ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումներ, բարեհաջող ծառայում են մինչև 7 տարի 85-96% դեպքերում, անհաջող դեպքերի տարեկան միջին ինտենսիվությունը կազմում է

3,2%: [60, 63, 64] Մշտական ատամներում I դասի կարիոզ խոռոչների ամալգամե ռեստավրացիաների արդյունավետությունը ուսումնասիրվել է երկու անկախ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումների միջոցով և կազմել է 89,8-98,8% մինչև 7 տարի տևողությամբ ժամկետներում: [60, 62]

Կաթնատամ աղորիքներում II դասի կարիոզ խոռոչների ամալգամե ռեստավրացիաների ուսումնասիրությունների պարբերական վերլուծությունները 2007 թ. բերել են այնպիսի եզրահանգման, որ ամալգաման կարող է պահպանվել առնվազն 3,5 տարի, հնարավոր է մինչև 7 տարի: [65] Մշտական ատամներում II դասի կարիոզ խոռոչների ռեստավրացիաների ուսումնասիրությունների մեկ մետա-անալիզ և մեկ փաստացի հիմնավորված վերլուծություն ցույց են տվել, որ ամալգամե և կոմպոզիտային ռեստավրացիաների անհաջող դեպքերի տարեկան միջին ինտենսիվությունը կազմում է 2,3%: [56, 59] Մշտական ատամներում II դասի կարիոզ խոռոչների ամալգամե և կոմպոզիտային ռեստավրացիաների համեմատության մետա-անալիզները ցույց են տալիս, որ կոմպոզիտների փոխարինման ավելի բարձր հաճախականությունը ընդհանուր պրակտիկայում մասամբ պայմանավորված է ընդհանուր պրակտիկայի բժիշկ-ստոմատոլոգների կողմից եզրային գունափոխության և եզրային կարիեսի շփոթման փաստով, ինչն էլ բերում է ռեստավրացիայի հետագա վաղաժամ փոխարինման: Մյուս կողմից, այս մետա-անալիզը ցուցադրում է, որ կոմպոզիտային և ամալգամե ռեստավրացիաների ստատիստիկ տվյալներով ապացուցված հաջողության միջին ցուցանիշը 10 տարի անց համանման է և կազմում է 92% և 94% համապատասխանաբար: [56]

Ամալգաման և այլ ռեստավրացիոն նյութերը համեմատող հետազոտությունների սահմանափակումներից է այն, որ ուսումնասիրման տևողությունը հաճախ կարճ է՝ 24-36 ամիս, իսկ այդպիսի ժամանակահատվածում բոլոր նյութերը ցուցաբերում են համանման հատկություններ: [66-70] Այդ հետազոտություններից մի մասի դեպքում առկա է շեղումների վտանգ՝ իրական ռանդոմիզացիայի բացակայության, կույր հետազոտության անցկացման հնարավորության բացակայության պատճառով,

բացի այդ, որոշ դեպքերում ֆինանսական աջակցություն են ցուցաբերում այն գործարանները, որտեղ արտադրում են հետազոտման ենթակա նյութերը:

Ցուցումներ.

1 Ամալգաման որպես արդյունավետ տարբերակ կարելի է կիրառել կաթնատամների և մշտական ատամների | դասի կարիոզ խոռոչների վերականգնման դեպքում:

Հայաստանի հանրապետությունում ամալգամայի կիրառումը չունի լայն տարածում՝ կապված պացիենտների և բժշկական անձնակազմի անվտանգությունն ապահովող տեղնիկական միջոցների բացակայության հետ:

Կոմպոզիտներ

Խեժային հենքով կոմպոզիտները ստոմատոլոգիայում սկսել են կիրառել որպես ռեստավրացիոն նյութեր մոտ կես դար առաջ: [71, 72] Դրանք ավելի հաճախ են սկսել կիրառվել ամալգամայի փոխարեն կարիոզ ախտահարումների վերականգնման ժամանակ: [73] Կոմպոզիտները բաղկացած են խեժային մատրիցայից և լեցիչներից: [74] Դրանք դասակարգվում են՝ կախված լեցիչի չափերից, քանի որ լեցիչի չափերն են որոշում կոմպոզիտի հղկելիությունը/գեղագիտական հատկությունները, պոլիմերիզացիայի խորությունը, պոլիմերիզացիոն նստեցման աստիճանը և ֆիզիկական հատկությունները: Հիբրիդային կոմպոզիտները պարունակում են լեցիչի տարբեր չափերի մասնիկներ, ինչն ապահովում է միաժամանակ և ամրություն, և գեղագիտական հատկություններ: [75] Լեցիչի փոքր մասնիկներն ապահովում են լավ հղկելիություն և գեղագիտություն, մինչդեռ մեծ չափի մասնիկներն ապահովում են ամրություն: Հոսուն կոմպոզիտներն ունեն լեցիչի ավելի ցածր ծավալային տոկոս, քան հիբրիդային կոմպոզիտները: [76]

Որոշ գործոններ նպաստում են կոմպոզիտների երկարակեցությանը, այդ թվում բժշկի փորձառու լինելը, վերականգնման ծավալը և ատամի դիրքը: [77] Կոմպոզիտներն՝ ի տարբերություն ամալգամայի, ավելի զգայուն են տեղադրման տեխնիկայի հանդեպ և պահանջում են տեղադրման ավելի երկար ժամանակ: Այն դեպքում, երբ ատամի լիարժեք մեկուսացումը կամ պացիենտի հետ համագործակցությունը կասկածելի են, կոմպոզիտները ցուցված չեն որպես ռեստավրացիոն նյութ: [78]

BPA և նրա ածանցյալները խեժային հենքով սիլանտների և կոմպոզիտների բաղադրիչներն են: BPA ածանցյալների աննշան քանակներ արտազատվում են կոմպոզիտներից թքի ֆերմենտների ազդեցության տակ և կարող են հայտնաբերվել թքի մեջ պլոմբավորումից հետո երեք ժամվա ընթացքում: [79] Կուտակվել են ապացույցներ, որ BPA որոշ ածանցյալներ կարող են վտանգ ստեղծել առողջության համար՝ կապված դրանց էստրոգենային հատկությունների հետ: BPA ազդեցության նվազեցման կարելի է հասնել լեցավորման մակերեսը պեմզայով, բամբակե գլանիկով և ողողումով մաքրելով: Բացի այդ, պոտենցիալ ազդեցությունը կարելի է կրճատել՝ կիրառելով rubber dam: [79] Հաշվի առնելով խեժային հենքով նյութերի առավելությունները և BPA և նրա ածանցյալների նվազագույն ազդեցությունը, ցուցված է կիրառել այս նյութերը, ձգտելով պահպանել անվտանգության կանոնները և հասցնել դրանց հնարավոր ազդեցությունը նվազագույնի: [79]

Առկա են I և II դասի կարիոզ խոռոչների կոմպոզիտներով և ամալգամայով վերականգնման դեպքերի 59 ռանդոմիզացված կլինիկական փորձարկումների մետա-անալիզների ծանրակշիռ ապացույցներ, որոնք ցուցադրում են բարեհաջող արդյունքներ երկու նյութերի համար 10 տարիների ընթացքում մոտավորապես 90% դեպքերում, իսկ rubber dam-ի կիրառումը զգալի մեծացնում է ռեստավրացիայի երկարակեցությունը: [74] Կոմպոզիտային և ամալգամե ռեստավրացիաները համեմատող ռանդոմիզացված վերահսկվող կլինիկական փորձարկումների

ապացույցները ցույց են տալիս, որ երկու դեպքում էլ անհաջող ելքի հիմնական պատճառը ռեցիդիվող կարիեսն է: [60, 77, 80]

Առկա են ապացույցներ, որ կաթնատամներում I դասի կարիոզ խոռոչների վերականգնումը կոմպոզիտներով բավականին բարեհաջող ելք է ունենում: [60, 64]

Կաթնատամներում, որոնց փոխարինմանը մնացել է 2 տարուց քիչ ժամանակ, կոմպոզիտներով II դասի խոռոչների պլոմբավորման հաջողության վերաբերյալ առկա է միայն մեկ ռանդոմիզացված վերահսկվող փորձարկում: [68] Մշտական աղորիքներում կոմպոզիտային ռեստավրացիան տեղադրումից 3,4 տարի անց չի տարբերվում ամալգամե ռեստավրացիայից, [60] սակայն 7-10 տարի անց ավելի հաճախ փոխարինման ենթակա է լինում կոմպոզիտային ռեստավրացիան: [78] Համեմատած ամալգամե ռեստավրացիաների հետ՝ կոմպոզիտային ռեստավրացիաների դեպքում երկրորդային կարիես հանդիում է 3,5 անգամ ավելի շատ: [77]

Գոյություն ունեն մետա-անալիզների տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ էմալի և դենտինի թթվամշակումը և բոնդինգը զգալի նվազեցնում են կոմպոզիտային ռեստավրացիայի եզրային գունափոխումը և ռետենցիոն կետերի առաջացումը: [74]

Գոյություն ունեն փաստացի ապացույցներ, որոնք հաստատում են տարբեր տեսակի կոմպոզիտների (խտացվող, նանո-, միկրո-, մակրոլեցավորված) համանման կլինիկական արդյունավետությունը: [81-84]

Խորհուրդներ

- 1. Կաթնատամներում I դասի կարիոզ խոռոչների վերականգնում կարելի է կատարել կոմպոզիտներով:**
- 2. Մշտական ատամներում I և II դասի կարիոզ խոռոչները կարելի է բարեհաջող պլոմբավորել կոմպոզիտային պլոմբանյութերով:**

Ապակեիոնոմերային ցեմենտներ.

Ապակեիոնոմերային ցեմենտները (ԱԻՑ) ստոմատոլոգիայում կիրառվում են որպես ռեստավրացիոն ցեմենտներ, մեկուսիչ/հիմնային տակդիրներ, ֆիքսացիոն ցեմենտներ դեռևս 1970 թթ սկզբից: [85] Ի սկզբանե, ապակեիոնոմերային նյութերը եղել են աշխատանքի մեջ բարդ, փխրուն, ցուցաբերել են ցածր կայունություն մաշվածության հանդեպ: Սովորական ապակեիոնոմերային նյութերի կատարելագործումը, ներառյալ խեժերով մոդիֆիկացված ապակեիոնոմերային ցեմենտի ստեղծումը, բերել է հատկությունների բարելավման: Այս նյութերը հետ աշխատանքն ավելի դյուրին է, ամրությունն ավելի բարձր է, մեծ է նաև մաշվածության հանդեպ կայունությունը: [86, 87] Բոլոր ԱԻՑ-ը օժտված են որոշակի հատկություններով, որոնք դարձնում են դրանք ավելի նախընտրելի, այդ թվում նաև մանկական պրակտիկայում կիրառելու համար՝

- քիմիական կապ էմալի և դենտինի հետ
- ատամի հյուսվածքներին բնորոշ ջերմային լայնացման գործակից
- կենսահամատեղելիություն
- ֆտորի կլանում և արտազատում
- կոմպոզիտների հետ համեմատած՝ խոնավության հանդեպ ավելի փոքր զգայունություն:

Ֆտորն արտազատվում է ԱԻՑ-ից և ներթափանցում շրջապատող էմալի և դենտինի մեջ, նպաստելով թթուների հանդեպ տվյալ ատամի հյուսվածքների ավելի բարձր կայունությանը: [88, 89] Մեկ ուսումնասիրություն ցույց է տվել, որ ֆտորի արտազատումը շարունակվում է առնվազն մեկ տարի: [90] ԱԻՑ-ը կարող են գործել որպես ֆտորի "պահեստներ", իսկ ֆտորի կլանումը կարող է տեղի ունենալ ատամի մածուկներից, բերանի խոռոչի ողողիչներից և ֆտորի տեղային ապլիկացիաներից: [91, 92] Նշված ֆտորային պաշտպանությունը, որն օգտակար է կարիեսի առաջացման բարձր ռիսկի խմբի պացիենտների համար, բերել է ԱԻՑ-ի օգտագործման որպես ֆիքսացիոն ցեմենտ ստանդարտ պողպատից պսակների, տեղի պահպանիչների և օրթոդոնտիկ օղակների ֆիքսացիայի համար: [93]

Կաթնատամներում սովորական ԱԻՑ-ի կիրառումը ուսումնասիրող մեկ ռանդոմիզացված կլինիկական փորձարկում ցույց է տվել, որ ԱԻՑ-ով ռեստավրացիայի արդյունավետության միջին տևողությունը՝ տեղադրման պահից մինչև արտանկում, կազմում է 1,2 տարի: [63] Ըստ սիստեմատիկ վերլուծությունների և մետա-անալիզների տվյալների՝ սովորական ԱԻՑ-ը ցուցված չեն կաթնատամ աղորիքներում II դասի խոռոչների պլոմբավորման համար: [94, 95] Սովորական ԱԻՑ-ն ունեն թերություններ՝ անատոմիական ձևի լիարժեք վերականգնման և կատարյալ եզրային հպման ապահովման անհնարինություն: [96, 97] Կոմպոզիտային ռեստավրացիաներն ավելի բարեհաջող են, քան ԱԻՑ-ով ռեստավրացիաները, երբ հնարավոր է ապահովել ատամի լիարժեք մեկուսացում թքից: [95]

ԽՄԱԻՑ-ը, որոնց թթվա-հիմնային պոլիմերիզացումը լրացված է լուսային կարծրացումով, արդյունավետություն են ցուցաբերում կաթնատամներում: Ըստ մետա-անալիզների տվյալների՝ ԽՄԱԻՑ-ը որպես ռեստավրացիոն նյութ ավելի արդյունավետ են, քան սովորական ԱԻՑ-ը: [95] Պարբերական վերլուծությունները հիմնավորում են ԽՄԱԻՑ-ի կիրառումը II դասի փոքր և չափավոր մեծության խոռոչների դեպքում: [94] ԽՄԱԻՑ-ով II դասի խոռոչների վերականգնումներն ունակ են դիմակայել ծամողական ճնշմանը կաթնատամ աղորիքներում առնվազն մեկ տարի: [95] Ֆտորի արտազատման պատճառով ԽՄԱԻՑ-ը կարելի է կիրառել կարիեսի առաջացման բարձր ռիսկի խմբի պացիենտների մոտ կաթնատամներում I և II կարիոզ ախտահարումների պլոմբավորման նպատակով: [97] Գոյություն ունեն նաև ապացույցներ, որ դենտինի մշակումը փրայմերով մեծացնում է ԽՄԱԻՑ-ի արդյունավետությունը: [94] Համաձայն մեկ ռանդոմիզացված կլինիկական փորձարկման տվյալների՝ խոռոչի եզրերի թեքության ստեղծումը թուլացնում է ռեստավրացիայի եզրային հպումը, ուստի ցուցված չէ: [80]

Մետա-անալիզները ցույց են տալիս, որ մշտական ատամներում եզակի, ատամի մեկ մակերեսն ընդգրկող կարիոզ խոռոչների պլոմբավորումը ԱԻՑ-ով 6 տարի անց

ցուցաբերում է նույնպիսի արդյունքներ, ինչպես ամալգամայով վերականգնումները: [97] Մետա-անալիզների տվյալներին համաձայն՝ ԽՄԱԻՑ-ն ավելի արդյունավետ են կարիեսի կանխարգելման տեսանկյունից, քան կոմպոզիտային նյութերը՝ ֆտորի պարունակությամբ կամ առանց ֆտորի: [98] Այլ մետա-անալիզների տվյալներով՝ ԱԻՑ-ով հարվզիկային ռեստավրացիաները (V դաս) ունեն լավ ռետենցիոն հատկություններ, սակայն անհաջող գեղագիտական տեսք: [99] Համաձայն մեկ ռանդոմիզացված կլինիկական փորձարկման արդյունքների՝ II դասի ռեստավրացիաները սովորական ԱԻՑ-ով ցուցաբերում են անհաջող ելքերի անցանկալի բարձր հաճախականություն՝ անկախ խոռոչի մեծությունից: Սակայն այս հետազոտության մեջ մեծաքանակ բացառությունների առկայությունը սահմանափակում է նրա նշանակությունը: [100] Ընդհանուր առմամբ, գոյություն չունեն բավականաչափ ապացույցներ, որոնք կարող են հիմնավորել ԽՄԱԻՑ-ի կիրառումը մշտական ատամներում որպես երկարատև վերականգնում:

ԱԻՑ-ի այլ հատկություններ թույլ են տալիս կիրառել դրանք որպես միջանկյալ թերապևտիկ ռեստավրացիաներ (ՄԹՌ) և ատրավմատիկ ռեստավրացիոն տեխնիկայում (ԱՌՏ): Նշված պրոցեդուրաներն ունեն միանման տեխնիկաներ, սակայն տարբեր թերապևտիկ նպատակներ: ՄԹՌ կարելի է կիրառել շատ երիտասարդ պացիենտների մոտ, [101] կոնտակտի չգնացող պացիենտների մոտ կամ հատուկ բժշկական խնամքի կարիք ունեցող պացիենտների [102] մոտ, երբ խոռոչի դասական մշակումը և/կամ դասական ռեստավրացիայի տեղադրումն անհնար է իրականացնել կամ պետք է հետաձգել: Բացի այդ, ՄԹՌ կարելի է կիրառել մինչև ատամների վերջնական պլոմբավորումը կարիեսի վերահսկման նպատակով բազմաթիվ կարիոզ ախտահարումներ ունեցող երեխաների մոտ: [103] In-vitro պայմաններում կարիեսով ախտահարված դենտինը չի վտանգում ԱԻՑ-ի կապը կաթնատամի դենտինի հետ: [104] ԱՌՏ մեթոդը, որը հավանության է արժանացել ԱՀԿ-ի և ՍՀՄԱ-ի կողմից, ենթադրում է կարիեսի բուժում և կանխարգելում այն պոպուլյացիաներում, որոնք զուրկ են դասական

ստոմատոլոգիական օգնություն ստանալու հնարավորությունից, և այն գործում է որպես բուժման վերջնական տարբերակ:

Համաձայն մետա-անալիզների տվյալների՝ մեկ ախտահարված մակերեսի ԱՌՏ վերականգնումը ցուցաբերում է բարձր արդյունավետություն և կաթնատամներում, և մշտական ատամներում: [105] Մեկ ռանդոմիզացված կլինիկական փորձարկման արդյունքների համաձայն՝ մեկ ախտահարված մակերեսով ատամի ռեստավրացիան կախված չէ խոռոչի մեծությունից և նույնպես ավելի բարեհաջող ելք է ունենում ծամիչ ատամների ոչ օկլուզիոն մակերեսների վերականգնման դեպքում ԱՌՏ մեթոդիկայով՝ համեմատած օկլյուզիոն մակերեսների նույն մեթոդիկայով վերականգնման հետ: [106] Նույն ատամի մի քանի մակերեսների ախտահարման դեպքում ԱՌՏ մեթոդիկայի կիրառման վերաբերյալ տվյալները հակասական են: Մետա-անալիզների արդյունքներին համաձայն՝ կաթնատամներում II դասի խոռոչների վերականգնման դեպքում ԱՌՏ մեթոդիկայի կիրառումը ցուցաբերում է այնպիսի էֆեկտ, ինչպիսին առկա է կոմպոզիտային և ամալգամե ռեստավրացիաներից հետո: [107] Սակայն այլ մետա-անալիզներ ցույց են տալիս, որ կաթնատամների պարագայում նույն ատամի մի քանի մակերեսների ախտահարման դեպքում ԱՌՏ մեթոդիկայի կիրառումը բերում է բուժման անհաջողության ցուցանիշների բարձրացման: [105]

Խորհուրդներ

- 1. Կաթնատամներում I դասի խոռոչների վերականգնման ժամանակ նախընտրելի են ԱԻՑ-ը:**
- 2. ԽՄԱԻՑ-ը կարելի է կիրառել որպես կաթնատամներում I և II դասի խոռոչների վերականգնման արդյունավետ միջոց:**
- 3. Բարձր մածուցիկությամբ ԱԻՑ-ի կիրառմամբ ՄԹՌ և ԱՌՏ մեթոդիկաները արդյունավետ են կաթնատամներում և մշտական ատամներում մեկ ախտահարված մակերեսով ատամի վերականգնման ժամանակ: Բացի**

այդ ՄԹՌ կարելի է կիրառել մինչև ատամների վերջնական պլումբավորումը կարիեսի վերահսկման նպատակով բազմաթիվ կարիոզ ախտահարումներ ունեցող երեխաների մոտ:

Կոմպոմերներ

Կոմպոմերները (խեժային հենքով կոմպոզիտներ՝ մոդիֆիկացված թթվային պոլիմերներով) ստոմատոլոգիայում ներկայացվել են 1990-ականների կեսերին: Դրանց բաղադրության 72% կազմում է ստրոնցիումի ֆտորոսիլիկատը, իսկ մասնիկների միջին չափը կազմում է 2,5 միկրոմետր: [108] Խոնավությունը ձգտում է և դեպի կոմպոմերի թթվային բաղկացուցիչ մասը, և դեպի իոնոմերային մաս: Այն կարող է խթանել ֆտորի արտազատման ռեակցիան և չեզոքացնել թթվային միջավայրը: [109, 110] Հաշվի առնելով ֆտորի արտազատման ունակությունը, գեղագիտական արժեքը և օգտագործման դյուրինությունը, կոմպոմերները կարելի է կիրառել մանկական ստոմատոլոգիական պրակտիկայում: [108]

Վերջերս կատարված ռանդոմիզացված կլինիկական փորձարկումների տվյալներով՝ կաթնատամներում I դասի խոռոչների կոմպոմերներով վերականգնումը չի տարբերվում ամալգամայով վերականգնումից, սակայն կոմպոմերները պետք է ավելի հաճախ փոխարինել ռեցիդիվող կարիեսի դեպքում: [60] Կաթնատամներում II դասի խոռոչների կոմպոմերներով վերականգնումից հետո 2 տարվա ընթացքում չի մեծացել երկրորդային կարիեսի զարգացման և ռեստավրացիայի արտանկման վտանգը: [69, 111] Կոմպոմերներն ունեն նաև կոմպոզիտների հետ համեմատելի կլինիկական արդյունավետություն գույների համատեղելիության, անատոմիական ձևի վերականգնման հնարավորության, եզրային ինտեգրացիայի և երկրորդային կարիեսի հետ կապված: [112, 113] Առավել ռանդոմիզացված կլինիկական փորձարկումները ցույց են տալիս, որ կոմպոմերներն օժտված են ավելի բարձր ֆիզիկական հատկություններով, քան ԱԻՑ-ը և ԽՄԱԻՑ-ը, սակայն գոյություն չունեն

տարբերությունների կոմպոնենտների և նշված նյութերի կարիեսական գ հատկությունների միջև: [63,111,114]

Խորհուրդներ

- 1. Կոմպոնենտները կարելի է կիրառել որպես կաթնատամներում I և II դասի խոռոչների վերականգնման այլընտրանքային տարբերակ:**

Ստանդարտ մետաղական պսակներ.

Ստանդարտ մետաղական պսակները, որոնք հայտնի են նաև որպես չժանգոտող պողպատից պսակներ, պատրաստի մետաղական պսակներ են, որոնք հարմարեցվում են տվյալ ատամին և ամրացվում են կենսահամատեղելի ֆիքսացիոն նյութի օգնությամբ: Դրանք ցուցված են հետևյալ դեպքերում՝

- տարածուն կարիոզ ախտահարում,
- հարվզիկային ապակրակալում և/կամ զարգացման արատներ (օրինակ, հիպոպլազիա, հիպոկալցիֆիկացիա),
- այլ ռեստավրացիոն նյութերի կիրառման անբարեհաջող ելքի հնարավորություն,
- պուլպոտոմիայից կամ պուլպէկտոմիայից հետո,
- տեղի պահպանիչի համար աբաթմենտի դեր խաղացող կաթնատամի վերականգնում,
- կոտրված ատամի ժամանակավոր ռեստավրացիա,
- կարիեսի առաջացման բարձր ռիսկի խմբի երեխաների մոտ որպես վերջնական բուժման տարբերակ,
- այն պացիենտների մոտ, ովքեր պետք է բուժվեն սեղացիայի կամ ընդհանուր անզգայացման պայմաններում: [115]

Գոյություն ունեն ստանդարտ մետաղական պսակները և ներպսակային ռեստավրացիաները համեմատող շատ քիչ պրոսպեկտիվ ռանդոմիզացված

կլինիկական փորձարկումների արդյունքներ: [116, 117] Որոշ սիստեմատիկ վերլուծությունների տվյալներով՝ ստանդարտ մետաղական պսակների կիրառման կլինիկական ապացույցները ստացված են ոչ ռանդոմիզացված և ռետրոսպեկտիվ ուսումնասիրությունների արդյունքում: [13, 118-120] Այնուամենայնիվ, այդ տվյալները հիմնավորում են, որ ստանդարտ մետաղական պսակները ծառայում են ավելի երկար, քան ամալգամե ռեստավրացիաները, [13] չնայած կարող են առաջանալ հետազոտության արդյունքների շեղումներ՝ կարիեսով առավել ախտահարված ատամներին պսակներ տեղադրելու դեպքում: [118, 119, 121] Ու դասի խոռոչների ամալգամայով և ստանդարտ պսակներով վերականգնումների ռետրոսպեկտիվ համեմատությամբ զբաղվող հինգ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ միջինում 5 տարիների ընթացքում անհաջող ելքերի հաճախականությունը ամալգամայի դեպքում կազմում է 26%, իսկ ստանդարտ պսակների դեպքում՝ 7%: [119]

Պուլպոտոմիայի ենթարկված կաթնատամների վերականգնմանը վերաբերող երկամյա ռանդոմիզացված վերահսկվող կլինիկական փորձարկումը հայտնաբերել է աննշան տարբերություն ստանդարտ պսակներով (95%) և ԽՄԱԻՑ-ով/կոմպոզիտներով (92,5%) վերականգնման արդյունավետության մեջ: [116] Այլ պրոսպեկտիվ ուսումնասիրության ընթացքում ռեստավրացիայի արդյունավետությունը և կալցիումի հիդրօքսիդի կիրառմամբ պուլպոտոմիայի հաջողությունը մեկ տարի անց ավելի մեծ են եղել ստանդարտ մետաղական պսակների կիրառման դեպքում (79,7%)՝ ի տարբերություն ամալգամայով կատարված ռեստավրացիաների (60%): [122] Այնուամենայնիվ, սիստեմատիկ վերլուծությունը չի բացահայտում ծանրակշիռ ապացույցեր այն բանի, որ ստանդարտ մետաղական պսակները բոլոր տեսակի ռեստավրացիաներից լավագույնն են պուլպոտոմիայի ենթարկված ատամների համար: [123]

Ստանդարտ մետաղական պսակների հետ շփվող լնդի վիճակի վերաբերյալ մեկամյա ռանդոմիզացված վերահսկվող փորձարկումը ցույց է տվել, որ

պուլպոտոմիայից հետո ստանդարտ մետաղական պսակներով վերականգնված ատամների շուրջ լնդերի բորբոքումը չի տարբերվում կոմպոզիտային պլոմբանյութով վերականգնված ատամների շուրջ լնդերի բորբոքումից: [118] Միևնույն ժամանակ մեկ այլ երկամյա ունդոմիզացված կլինիկական փորձարկման արդյունքում պարզվել է, որ համեմատած կոմպոզիտային կամ ԱԻՑ-ով ռեստավրացիաների հետ՝ ստանդարտ մետաղական պսակներով վերականգնման դեպքում լնդերից արյունահոսություն ավելի հաճախ է հանդիպում: [116] Պսակի անհամապատասխան եզրերը և ցեմենտի մնացորդները լնդակոսում լնդաբորբի առաջացման պատճառ են դառնում, վերջինիս կանխարգելման նպատակով բուժման պլանի մեջ պետք է ներառվեն բերանի խոռոչի հիգիենայի հետ կապված ցուցումները: [119]

Բուժված ատամների վերականգնման նպատակով ստանդարտ կամ ծուլովի պսակների գերադասելիության վերաբերյալ անցկացված մեկ ունդոմիզացված վերահսկվող փորձարկման արդյունքում 24 ամիս անց չեն հայտնաբերվել տարբերություններ նշված տարբերակների որակի և ծառայության տևողության միջև: Մշտական աղորիքներում ստանդարտ մետաղական պսակների կիրառումը հիմնավորում են տարբեր դեպքերի վկայություններն ու մասնագետների կարծիքները դրանց կիրառման ցուցումների վերաբերյալ: Ցուցումները ներառում են լուրջ գենետիկական/զարգացման արատներով ատամները, արտահայտված կարիեսային ախտահարումներով ատամները, վնասված ատամները, ատամի զարգացման փուլի կամ որոշակի ֆինանսական խնդիրների հետ կապված վիճակները, որոնք պահանջում են ժամանակավոր վերականգնում՝ մշտականի փոխարեն: [120, 121, 124] Ստանդարտ մետաղական պսակների կիրառման անհաջողության գլխավոր պատճառներն են պսակի ապացեմենտավորումը [13, 122,125] և թափաժակումը: [125]

Hall Technique (HT)

Տվյալ մեթոդիկան ենթադրում է կաթնատամի վերականգնում չժանգոտող պողպատից պսակով՝ առանց տեղային անզգայացման, կարիոզ ախտահարման հեռացման և ատամի հղկման: Մեծ Բրիտանիայում HT-ն լայն տարածում է գտել, [126] մինչդեռ ԱՄՆ-ում այն բավականին վիճելի է համարվում: Մեծ Բրիտանիայում HT-ի արդյունավետության վերաբերյալ բոլոր պրոսպեկտիվ հետազոտություններն իրականացրել են ընդհանուր պրակտիկայի ստոմատոլոգները, ովքեր զբաղվում են մեծամասամբ փոքր երեխաների բուժմամբ: Այնտեղ կաթնատամների վերականգնումը պողպատից պսակներով տարածված կամ հաճախակի կիրառվող մեթոդ չի համարվում, չնայած նրան, որ BSPD-ի կողմից ստեղծված ուղեցույցներում և արձանագրություններում պողպատից պսակները համարվում են կաթնատամ աղորիքների բազմամակերեսային կամ տարածուն կարիոզ ախտահարումների կամ էնդոդոնտիկ բուժումից հետո ատամի վերականգնման ընտրության տարբերակ: [127-130]

